յականորէն»։ Այս վկայականէն զատ յիշեալ թուղթերէն մէյն հակառակ երեսին վրայ մտ. Յովհաննէս կը գրէ հետևեալ տեղեկութիւնները. «թվ. հայոց ՌՄԽԲին (=1793) հղև ծնունդ Ղազարի որդի մահտեսի Օհանէսին ի Խոիա մհալն. ի գուղն Գիրէվան. որ կայր եկեղեցի անուամբն Սուրբ Աստուածածնայ՝ մեծութեամբ հրաշայլի կառուցեալ»։ «Եւս Խոիայ ցրվելն ՌՄԽԷ (=1798)ին որ Զավար խան մեզ բերեց Պայազիտ»։ «Եւս ծիրանաւոր եկեղեցու շինելն ՌՄԾԴին (=1805)։ «Եւս նորոքումն Սուրբ Կարապետ եկեղեցու ՌՄԿԶին (=1817)։ Իմ Երուսաղէմ երթալս ՌՄԿԲին (=1813) ևս գալն ՌՄԿԴ (=1814)։ Եւս իմ նշանվիլն ՌՄԿԶին (=1817)։ «Եւս Ֆլիգալն որ էկաւ Պայազիտ. Պապեան չահն յղեց Ստամպոլ թագայորին, ևս մտոսի. Օհանէսըս նշանելու էին. կը·ին պսակվայ. ի·ին գնացի Ղարապաղ»։ «Ուռուս Էրէվան առնէր ՌՄՀԵին (=1826). մեկի որ բերեց Տաշրուռուն ՌՄՀԹին (=1830)... «Նիկոլայ թագայոր որ եկաւ Էրէվան՝ տեսաք մեք ՌՄՁԶին (=1837) հոկտեմբեր հինկին. մէկ գիշեր մնաց որ գնաց»։ Այս ընդօրինակութիւնը կատարուած է նոյնութեամբ. իսկ գալով մտ. Յովհաննէսի 1840ի գրի առած Ակռռի գիւղի պատմութեան՝ շատ հետաքրքրական և կարևոր յիշատակարան մ'է, որուն մէջ իբր ականատես վկայ, ան մանրամասն կը պատմէ 1840ի սոսկալի երկրաշարժի հետևանքով Ակռռի բազմարդ գիւղի ամբողջական կործանումը։ Այդ սրտաճմլիկ պատմութենէն Երուսաղէմի վերաբերեալ աւանդական կտոր մը միայն կը գտնենք հոս նոյնութեամբ. «...Դարձեալ եղպա՛յր· չի լինի որ միուս անգամ Մասեաց բոլոր գուղ չինէք.— չէք վայելեր. ինչ համար այն սարն գեղ այ Նոյեայ ևս սրբոց ճգնայորաց և քարինս Մասսայ ամեն սուրբ են եթէ որ սուրբ չլինէր, ընդէ՞ր հրեշտակն մէկ ողչարայ չափ քար տարեր Երուսաղէմ, որ մայր Աստուծոյ հանպուրեր այ նորայ և ուխտ ապրեալ է. ես տեսել եմ աչօքս այն քարն որ այժմուս կայ...»։ (Արարատ. 1903, էջ 629—634)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՇՊԱԶԻՐԿԱՆԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ. — 1794ին Պետրոս պտրք·ի օրով Քէօթահիոյ գեղակերտ ֆինիներով Ս. Յակոբի վանքին Ս. Էջմիածնի տաճարը գեղեցկապէս զարդարել կուտայ իր անձնական ծախքովը։ Նոյն տաճարին հիւսիսային